

ներու ձերքը ունի և շնորհիւ իր դիւրահասկնալի ու պատկերալից գրչին, հինգ տարուան շրջանի մը մէջ մեզի տուած է ոչ միայն բժշկա-առողջապահական արժէքաւոր և օգտաշատ գրքեր *), որոնց գտած ջերմ ընդունելութիւնը բացառիկ է մեր մէջ, այլ բազմաթիւ յօդուածներ, ցրուած զանազան թերթերու մէջ:

Այդ յօդուածներու ամողջութիւնն է որ ան լոյս կ'ընծայէ ներկայ հատորով, «ՀՆԳԱՄԵԱՅ ԶՐՈՅՑՆԵՐ» խորագրին տակ:

Այս գիրքը՝ Առողջութեան Մատեանն իսկ է: Ան ձեզ կուտայ պարզ ու հաճելի ոճով մը, գրական զանազան ձեւերու տակ — պատմութեամբ, ուսումնասիրութիւն, նօթեր և այլն — օգտաշատ և անհրաժեշտ ծանօթութիւններ առողջապահական այժմեական հարցերու, լաւագոյն սննդառութեան պայմաններու, ընթացիկ հիւանդութիւններու պատճառներուն և սկզբնական ախտանշաններուն, ախտաճանաչութեան արդի մէթոտներուն, հիւանդութիւնները կանխելու և դարմանելու նորագոյն միջոցներուն մասին: Այդ գրոյցներուն իւրաքանչիւր տողը կը յիշեցնէ առողջապահական հիմնական օրէնք մը, փնտաւար նախապաշարում մը կամ վտանգաւոր մտայնութիւն մը եւ ցոյց կուտայ այն ուղին՝ որուն պէտք է հետեւիլ կանխելու համար ախտաւոր հրդեհի մը բռնկումը մեր մարմինին մէջ, և, հրդեհի պարագային, հրշէջի օգնութեան դիմելու յարմար վայրկեանը, երբ կրակը տակաւին աւերներ պատճառած չէ: Մէկ խօսքով՝ այս գիրքը ձեզ կը սորվեցնէ ամէն օր ֆիզիքապէս և հոգեպէս նուազ մտշելու և աւելի առողջ սպրելու պայմանները, որոնք գլխաւոր հիմը կը կազմեն Նրջանկութեան:

Պէտք է ջերմապէս շնորհաւորել Տօքթ. Աբէլեանը, որ իր «Զբոյցներ»ով կուգայ հարստացնել հայ բժշկական գրականութիւնը եւ մեծապէս սատարել հայ ժողովուրդի առողջապահական դաստիարակութեան, որուն կենսական անհրաժեշտութիւնը ըմբռնած են յառաջագէտ ժողովուրդներ:

ԲԺ. Լ. ԳԻՒՈՐԵԱՆ

(*) «Հէք մարան», «Մատեան Մանկանց», եւ այլն:

Ո՞րն է ԱՌՈՂՋԱՊԱՀԻԿ ԿԵՐՊԱՍԸ.— Ֆրանսական բժշկական Ակադէմիային եղած գիտական հաղորդագրութիւն մը ցոյց կուտայ որ ներքնագգեստի համար ամէնէն առողջապահիկ կերպամները՝ զուտ բուրդէ կամ առատ բուրդ պարունակող կերպամներն են, որովհետեւ անոնք Թոյլ կուտան որ քրտինքէն յաւաք եկած շոգին դիւրաւ անցնի եւ միեւնոյն ատեն կը չափաւորին քրտինքին շոգիացումը, երբ ան կ'արագ անայ արտաքին պայմաններու արդեցութեան տակ. հետեւաբար կ'արգիլեն պաղառութիւնը: